# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

<<14>> փետրվարի 2025 թ. քաղաք Մարալիկ

2025 թվականի փետրվարի 14-ին, ժամը 15:30-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու արտահերթ նիստը:

Նիստը վարում էր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի և 65-րդ հոդվածի համաձայն իմ նախաձեռնությամբ այսօր՝ փետրվարի 14-ին հրավիրել եմ համայնքի ավագանու արտահերթ նիստ, որը հիմնականում պայմանավորված է 2025 թվականի բյուջեում համապատասխան փոփոխություններ կատարելուն, համայնքի Շիրակավան և Ջրափի բնակավայրերում հանրակրթական նոր դպրոցների կառուցման գործընթացին, ներդրումային ծրագրերի միջոցով համայնքում նախատեսված ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջվող ներդրումներն ապահովելուն, ինչպես նաև հողային հարաբերությունների կարգավորման և ևս մի քանի այլ հարցեր:

Զեկուցողը տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը ավագանու անդամներին են տրամադրվել արտահերթ նիստը նախաձեռնելուց հետո՝ ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նույն ժամկետում այդ նյութերը տեղադրվել են համայնքի պաշտոնական համացանցային կայքում, որտեղ նշվել են նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու արտահերթ նիստին մասնակցում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 10 անդամները:

<<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Գոռ Աղաբեկյանը ավագանու նիստից բացակայում է հարգելի պատճառով:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝ Մուրադ Ասլանյանը:

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամ՝ Գագիկ Հակոբյանը:

Համայնքի ավագանու նիստին ներկա են համայնքի ղեկավարի տեղակալները, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ:

Անհարգելի կարգով բացակայում են՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու 6 անդամները.

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 1 անդամը,

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 1 անդամը:

Դրանով հանդերձ, ավագանու նիստի քվորումը ապահովված է, համայնքի ավագանու արտահերթ նիստը հայտարարում եմ բացված:

Տեղեկացվեց, որ թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հիմք ընդունելով Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՒՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 182-Ա որոշումը, վաղաժամկետ դադարեցվել են <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամներ ընտրված՝ Մառլեն Սուրենի Ղազարյանի, Միսակ Կարապետի Աբաջյանի, Թաթուլ Միհրի Բուլոյանի, Ֆայա Մակարի Գինոսյանի, Թագուհի Սպարտակի Գևորգյանի լիազորությունները:

Թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 6-ի N N 31, 32, 33, 34 և 35 որոշումներով Անի համայնքի ավագանու <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ավագանու անդամներ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամների մանդատները համապատասխանաբար տրվել են <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ Վերգինե Սուրիկի Կնյազյանին, Ավետիք Վաչեի Մանուկյանին, Սամվել Վահագի Խաչատրյանին, Լուսինե Աշոտի Հարությունյանին և Մելս Գուրգենի Մանուկյանին:

Զեկուցողը շնորհավորեց ավագանու անդամի մանդատ ստացած գործընկերներին, ցանկացավ նրանց արդյունավետ և կառուցողական աշխատանք՝ Անի համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման, համայնքի բնակչության բարեկեցության ապահովման կարևորագույն գործում:

Միաժամանակ համոզմունք հայտնվեց, որ ավագանու նորընտիր անդամները ակտիվորեն կներգրավվեն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով ավագանու անդամին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

Համայնքի ավագանին անցավ ավագանու նիստի օրակարգային հարցերի քննարկմանը.

Համայնքի ավագանու նիստի քննարկմանը ներկայացվեց համայնքի ավագանու արտահերթ նիստի 14 օրակարգի հարցերի նախագիծը՝

Համայնքի ավագանու նիստի քննարկմանը ներկայացվեց օրակարգի **14** հարցեր:

## ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/**

**2) <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

3) <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-013-0114-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 11,8072 ՀԵԿՏԱՐ ԵՎ 5,0492 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՀԱՅԿ-ԳՈՌ>> ՍԱՀՄԱՆԱՊԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-073-0120-0099 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.4 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 5-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ԿԱՌԱՎԱՐՄԱՆ) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՓԱԿԱՆԱՅԻՆ ՀՈՐԻ, ԵՆԹԱԿԱՅԱՆԻ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

8) ՄԱԶԾ «ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ <<ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ 2025>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 178-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Հայտարարվեց, որ ավագանու օրակարգի նախագիծը հրապարակված է, եթե օրակարգի նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Համայնքի ավագանու նիստի օրակարգի վերաբերյալ առաջարկությամբ հանդես եկավ ավագանու անդամ, <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության խմբակցության ղեկավար՝ Էդիկ ՈՒռուտյանը:

Առաջարկություն ներկայացվեց օրակարգի նախագծում ընդգրել հետևյալ հարցը՝

**15) ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ FAW, THE FIRST AUTOMOBILE WORK, FAW CA1161PK2L4E5A80 ՄԱԿՆԻՇԻ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Զեկուցողը ներկայացված օրակարգի հարցը ավագանու նիստի օրակարգում հրատապության կարգով ընդրկելը հիմնավորեց նրանով, որ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անի համայնքի կարիքների համար 2024 թվականի հոկտեմբերի 11-ի ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/15 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրով 2025 թվականին ձեռք բերված FAW, The First Automobile Work, FAW CA1161PK2L4E5A80 մակնիշի աղբատար մեքենան լիազոր մարմնում գրանցելու, պետական համարանիշ ստանալու և տեխնիկան շահագործելու համար այն անհրաժեշտ է ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում և հաշվառել, որպես համայնքի սեփականության գույք:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, արդյունքներով, ներկայացված առաջարկության հետ միասին, համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի, 65-րդ հոդվածի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի առաջին նստաշրջանի 2025 թվականի փետրվարի 14-ին ժամը $15^{30}$-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

3) <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-013-0114-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 11,8072 ՀԵԿՏԱՐ ԵՎ 5,0492 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՀԱՅԿ-ԳՈՌ>> ՍԱՀՄԱՆԱՊԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-073-0120-0099 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.4 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 5-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ԿԱՌԱՎԱՐՄԱՆ) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՓԱԿԱՆԱՅԻՆ ՀՈՐԻ, ԵՆԹԱԿԱՅԱՆԻ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

8) ՄԱՀԾ «ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ <<ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ 2025>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 178-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

15) 15) ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ FAW, THE FIRST AUTOMOBILE WORK, FAW CA1161PK2L4E5A80 ՄԱԿՆԻՇԻ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի 2-ից 10-րդ հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանին:

**<u>Օրակարգ-2</u>**

**2) <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ պետական ծրագրի շրջանակներում Անի համայնքի Շիրակավան բնակավայրում նախատեսված է կառուցել 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոց, որն սպասարկելու է ինչպես նշված բնակավայրին, այնպես է հարևան Գուսանագյուղ և Լուսաղբյուր բնակավայրերին:

Որոշման նախագծով նախատեսվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 205-րդ կետը և Անի համայնքի Շիրակավան բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակարթական նոր դպրոցի կառուցման վերաբերյալ հանրային 1-ին քննարկան 2024 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությունը, տալ նախնական համաձայնություն՝ <<ԵՐՎԱԴԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Պետական ծրագրի շրջանակներում

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները>> կարգի 28-րդ կետի դրույթներով,

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**<<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները>> կարգի 28-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 205-րդ կետը և Անի համայնքի Շիրակավան բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակարթական նոր դպրոցի

կառուցման վերաբերյալ հանրային 1-ին քննարկման 2024 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ նախնական համաձայնություն՝ <<ԵՐՎԱԴԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Պետական ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-3**

**3) <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ օրակարգի այս հարցը վերաբերվում նախորդ հարցին, այս դեպքում Անի համայնքի Ջրափի բնակավայրերում նախատեսված 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոցի կառուցմանը, որն սպասարկելու է ինչպես նշված բնակավայրին, այնպես է հարևան Սարակապ և Հայկաձոր բնակավայրերին:

Որոշման նախագծով նախատեսվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 205-րդ կետը և Անի համայնքի Ջրափի բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակարթական նոր դպրոցի կառուցման վերաբերյալ հանրային 1-ին քննարկման 2024 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությունը, տալ նախնական համաձայնություն՝ <<ԵՐՎԱԴԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Պետական ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների

ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները>> կարգի 28-րդ կետի դրույթներով,

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**<<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները>> կարգի 28-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 204-րդ կետը և Անի համայնքի Ջրափի բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակարթական նոր դպրոցի կառուցման վերաբերյալ հանրային 1-ին քննարկման 2024 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ նախնական համաձայնություն՝ <<ԵՐՎԱԴԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Պետական ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-4**

**4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-013-0114-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 11,8072 ՀԵԿՏԱՐ ԵՎ 5,0492 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկեւցողը նշեց, որ ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքի ղեկավարին է դիմել «ՄԵԳԱ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կառավարիչ Արամ Բարսեղյանը, արևային ֆոտովոլտային էլեկտրոկայան կառուցելու նպատակով ընկերության կողմից նախընտրելի համարված Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 08-013-0114-0001- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 11,8072 հա և 5,0492 հա համայնքի սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն փոխադրելու և հողամասը օրենքով սահմանված կարգով ընկերությանը օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունը չի համապատասխանում այդ հողամասում կառուցվելիք արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նշանակությանը (ՀՀ հողային օրենսգրքի 14-15-րդ հոդվածներ), ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 56-րդ և 59 կետերի համաձայն համայնքապետարանը նախաձեռնել է գործընթաց՝ Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Անիպեմզա բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն փոխադրելու համար:

Հողաշինական գործի վերաբերյալ ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող

միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ տրվել է 2025 թվականի հունվարի 13-ի N 2/փ-6 դրական եզրակացությունը:

Որոշման նախագծով նախատեսվում է Հաստատել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Անիպեմզա բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-013-0114-0001- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 11,8072 հա և 5,0492 հա համայնքի սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասերի փոխադրումը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն՝ այդ հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու նպատակով:

Որոշման ընդունումը կարգավորվում է Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 13-ի N 2/փ-6 դրական եզրակացությունը.

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ**

# ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-013-0114-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 11,8072 ՀԵԿՏԱՐ ԵՎ 5,0492 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվա¬կանի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 13-ի N 2/փ-6 դրական եզրակացությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Անիպեմզա բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-013-0114-0001- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 11,8072 հա և 5,0492 հա համայնքի սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասերի փոխադրումը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն՝ այդ հողամասերում արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

բ) հողամասի նպատակային նշանակության սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնել գործընթաց սույն որշման 1-ին կետով նախատեսված հողամասերում

արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու նպատակով հողամասերն օրենքով սահմանված կարգով աճուրդային եղանակով օտարելու համար:

գ) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

դ) Սահմանված կարգով և ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 22-րդ և 23-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

**<u>Օրակարգ-5</u>**

**5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՀԱՅԿ-ԳՈՌ>> ՍԱՀՄԱՆԱՊԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-073-0120-0099 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.4 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 5-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքի ղեկավարին է դիմել «ՀԱՅԿ-ԳՈՌ» ՍՊԸ -ի գործադիր տնօրեն՝ Սևակ Մխիթարյանը, արևային ֆոտովոլտային էլեկտրոկայան կառուցելու նպատակով, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 08-073-0120-0099 կադաստրային ծածկագրով 0.4 հա հողամասը, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն փոխադրելու խնդրանքով:

Համաձայն բնակավայրի կադաստրային քարտեզի և Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Ձորակապ բնակավայրի փաստաթղթի, հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության, 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամաս:

Նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունը չի համապատասխանում այդ հողամասում կառուցվելիք արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նշանակությանը (ՀՀ հողային օրենսգրքի 14-15-րդ հոդվածներ), ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված

<<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 56-րդ և 59 կետերի համաձայն համայնքապետարանը նախաձեռնել է գործընթաց՝ Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Զորակապ բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն փոխադրելու համար:

Հողաշինական գործի վերաբերյալ ՀՀ վարչապետի 2009 թվա¬կանի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ տրվել է 2024 թվականի սեպտեմբերի 20-ի N 2/փ-379 դրական եզրակացությունը:

Որոշման նախագծով նախատեսվում է հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Զորակապ բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Անի համայնքի Զորակապ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող ՀԱՅԿ-ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 08-073-0120-0099 կադաստրային ծածկագրով 0.4 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասի փոխադրումը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն՝ այդ հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու նպատակով:

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի N 2/փ-379 դրական եզրակացությունը:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ, խնդրում եմ ներկայացնել:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:
Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՀԱՅԿ-ԳՈՌ>> ՍԱՀՄԱՆԱՊԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-073-0120-0099 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.4 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 5-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվա¬կանի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 20-ի N 2/փ-379 դրական եզրակացությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Ձորակապ բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում Անի համայնքի Ձորակապ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող ՀԱՅԿ-ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվության

ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 08-073-0120-0099 կադաստրային ծածկագրով 0.4 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասի փոխադրումը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն՝ այդ հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

բ) հողամասի նպատակային նշանակության սույն որոշումն 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը:

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախաձեռնել գործընթաց՝ սույն որշման 1-ին կետով նախատեսված հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու նպատակով հողամասն օրենքով սահմանված կարգով աճուրդային եղանակով օտարելու համար:

գ) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

դ) Սահմանված կարգով և ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 22-րդ և 23-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

**Օրակարգ-6**

**6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ԿԱՌԱՎԱՐՄԱՆ) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 31-ի N 135-Ա որոշմամբ հաստավել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2024-2028 թվականների հնգամյա ծրագիրը: <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը մշակում, կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա ծրագրերը և այն ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

Որոշման նախագծով նախատեսվում է հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) 2025 թվականի կարգը, որը ներկայացված է հավելվածի տեսքով:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ԿԱՌԱՎԱՐՄԱՆ) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) 2025 թվականի կարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը

Օրակարգ-7

**7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՓԱԿԱՆԱՅԻՆ ՀՈՐԻ, ԵՆԹԱԿԱՅԱՆԻ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ համայնքների սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Անի համայնքի Աղին և Սարակապ բնակավայրերի խմելու ջրի մատակարարումն ապահովելու նպատակով 2022 թվականին Աղին բնակավայրի վարչական սահմաններում կառուցվել է պոմպակայան, տեղադրվել է խորքային պոմպ, ենթակայան և տարածքը պարսպապատվել է: Սակայն պոմպակայանի կառուցման համար հողհատկացում չի կատարվել, որը հնարավորություն չի տալիս պոմպակայանի նկատմամբ համայնքի իրավունքները ենթարկել պետական գրանցման

Որոշման նախագծով նակատեսվում է պոմպակայանի պահպանման ու սպասարկման համար անհատույց (մշտական) օգտագործման նպատակով տրամադրել համայնքի սեփականություն համարվող 08-008-0102-0001 կադաստրային ծակագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի 0.00700 հեկտար մակերեսով հողամասը և նախաձեռնել գործընթաց՝ հողամասի նպատակային նշանակությունը Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն փոխադրելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ**

## ՓԱԿԱՆԱՅԻՆ ՀՈՐԻ, ԵՆԹԱԿԱՅԱՆԻ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անի համայնքի Աղին և Սարակապ բնակավայրերի խմելու ջրի մատակարարումն ապահովելու նպատակով Աղին բնակավայրի վարչական սահմաններում կառուցված փականային հորի, ենթակայանի, խորքային հորի և պարիսպի /հետագայում՝ Շինություն/ պահպանման ու սպասարկման համար անհատույց (մշտական) օգտագործման նպատակով տրամադրել համայնքի սեփականություն համարվող 08-008-0102-0001 կադաստրային ծակագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի 0.00700 հեկտար մակերեսով հողամաս:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

Հաշվի առնելով, որ կառուցված Շինությունը հանդիսանում է արտադրական նշանակության շինություն, հողի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով, նախաձեռնել գործընթաց՝ սույն որոշման 1-ին կոտով նախատեսված հողամասի նպատակային նշանակությունը Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր կատեգորիա, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն փոխադրելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Օրակարգ-8**

**8) ՄԱՀԾ «ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի կողմից հավանության է արժանացել Անի համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի (ԿԵԽՄ) կողմից «Բնակիչների մասնակցության խթանում էլեկտրոնային կառավարման միջոցով» դրամաշնորհային ծրագիրի իրականացմանը: Ծրագրով նախատեսվում է համայնքի ավագանու նստավայրը հագեցնել անհրաժեշտ սարքավորումներով /Պլանշետ. բարձրախոս, էկրան, տեսաձայնագրող սարք, լուսանկարչական ապարատ/ և Անի համայնքի բնակիչների համար անցկացնել իրազեկման երեք դասընթաց՝ ՏԻՄ-ի գործառույթների վերաբերյալ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 4 մլն. ՀՀ դրամ, որի 20 տոկոսը, գումարով 800 հազ. դրամ, որպես ներդրում պահանջվում է համայնքից:

Որոշման նախագծով նախատեսվում է տալ համաձայնություն՝ «ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի կողմից հավանության արժանացած Անի համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի (ԿԵԽՄ) կողմից «Բնակիչների մասնակցության խթանում էլեկտրոնային կառավարման միջոցով» դրամաշնորհային ծրագիրի իրականացմանը և ապահովել համայնքից պահանջվող ներդրումը:

Դրամաշնորհային ծրագիրի իրականացման պատասխանատու է նշանակված Մարուսյա Բրուտյանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**<u>Օրակարգ-9</u>**

**9) «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ <<ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ 2025>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Գերմանական բարեկամություն 2025>>

ծրագրի շրջանակներում հավանության է արժանացել Անի համայնքի Ձիթհանքովի միջնարկարգ դպրոցի շենքի 2-րդ և 3-րդ հարկերի պատուհանների նորով փոխարինելու ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 4 մլն. ՀՀ դրամ, որի 11 տոկոսը, գումարով 400 հազ. դրամ, որպես ներդրում պահանջվում է համայնքից:

Որոշման նախագծով նախատեսվում է համայնքի 2025 թվականի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 /միջնակարգ ընդհանուր կրթություն/ և տնտեսագիտական դասակարգման 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ/ հոդվածից ապահովել նախատեսված 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ ներդրումը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ <<ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ 2025>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով, հաշվի առնելով, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Գերմանական բարեկամություն 2025>> ծրագրի շրջանակներում հավանության է արժանացել Անի համայնքի Ձիթհանքովի միջնարկարգ դպրոցի շենքի 2-րդ և 3-րդ հարկերի պատուհանների նորով փոխարինելու ծրագիրը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից /հետագայում՝ Նվիրատու/ <<Գերմանական բարեկամություն 2025>> ծրագրի շրջանակներում հավանության արժանացած Անի համայնքի Ձիթհանքովի միջնարկարգ դպրոցի շենքի 2-րդ և 3-րդ հարկերի պատուհանների նորով փոխարինելու ծրագիրի իրականացմանը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

Ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող ծրագրի արժեքի 11 տոկոսի չափով ներդրումը՝ գումարով 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ և օրենքով սահմանված կարգով Նվիրատուի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

3. Սույն որոշման 2-րդկետով նախատեսված 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ ներդրումը հատկացնել համայնքի 2025 թվականի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 /միջնակարգ ընդհանուր կրթություն/ և տնտեսագիտական դասակարգման 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ/ հոդվածից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Օրակարգ-10**

**10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի Ն 178-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-059-0008-0009 կադաստրային ծածկագրով 0,06413 հեկտար հողամասը համայնքի սեփականությանը ճանաչելու մասին>> Ն 178-Ա որոշմամբ Հայկաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող ակումբի նախկին շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-059-0008-0009 կադաստրային ծածկագրով 0,06413 հեկտար մակերեսով հողամասը ճանաչվել էր համայնքի սեփականություն: Սակայն որոշման մեջ, տեխնիկական վրիպակի արդյունքում, հողամասի մակերեսի թվային տվյալում թույլ է տրվել անճշտություն, որը և հիմք է հանդիսացել հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը կասեցնելու համար:

Որոշման նախագծով նախատեսվում է կատարել հողամասի մակերեսի թվային տվյալի ուղղում:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հաշվի է առնվել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 27/01/2025թ. N Կ-27012025-08-0048 որոշումը <<Գույքի նկատմամբ իրավունքների /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>>:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

Համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանը օրակարգի 11-րդ և 12-րդ հարցերը ներկայացնելու համար ձայնը տվեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյանին:

**<u>Օրակարգ-11</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/**

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման N N 1-5 հավելվածների նախագծերը և **պատասխանեց** ավագանու անդամների հարցերին:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1--3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման N N 1-4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N N 1-5 հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

N N 1-5 հավելվածները կցվում են արձանագրությանը:

**Օրակարգ-12**

**12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/**

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջետային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հոդվածների մասով փոփոխություն կատարելու չափաքանակը առաջարկվում է հաստատել՝ մինչև 30 (երեսուն) տոկոսի չափով:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի,

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 10, դեմ՝ 1, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջետային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հոդվածների մասով փոփոխություն կատարելու չափաքանակը հաստատել՝ մինչև 30 (երեսուն) տոկոսի չափով:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Օրակարգ-13**

**13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/**

Զեկուցողը նշեց, որ համայնքի ներքին ենթագոտու ջրատնտեսական համակարգերի սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտություն է առաջացել Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի N 162-Ա

որոշման N 9 հավելվածում կատարել լրացում և <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի հաստիքացուցակում ավելացնել հետևյալ հաստիքային միավորը՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 24 | Համայնքի ներքին ենթագոտու բնակավայրերի ջրատնտեսական համակարգերի սպասարկման պատասխանատու | 1 | 200 000 | 1 | 200 000 |

Իսկ <<Մարալիկի մշակութային երիտասարդական կենտրոն>> բյուջետային հիմնարկի հաստիացուցակում ավելացնել կես դրույք հավաքարարի հաստիք, որը ապահովելու է Լանջիկի մշակույթի տան սանիտարական մաքրությունը:

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 18 | Հավաքարար /Լանջիկի մշակույթի տուն/ | 1 | 104 000 | 0.5 | 52000 |

ՈրոշամաՆ ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**<u>Օրակարգ-14</u>**

**14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/**

Զեկուցողը նշեց, որ համայնքապետարանի աշխատակազմի Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմում անհրաժեշտություն է առաջացել ավելացնել մեկ միավոր Գործավար-օպերատորի հաստիք, որը կապահովի տեխնիկական սպասարկման հետ կապված գործառույթների փաստաթղթավորումը, հաշվառումը և սպասարկումը:

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | Պաշտոնային դրույքաչափը (Հազար ՀՀ դրամ) | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | (Հազար ՀՀ դրամ) | (Հազար ՀՀ դրամ) | (Հազար ՀՀ դրամ) |
| 67 | Գործավար-օպերատոր | 1 | 160.0 | 160,0 | - | 160,0 |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 161-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

ա) որոշման հավելվածի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ>> բաժնի 66-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 67-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ՝

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | Պաշտոնային դրույքաչափը (Հազար ՀՀ դրամ) | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՓԸ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | (Հազար ՀՀ դրամ) | (Հազար ՀՀ դրամ) | (Հազար ՀՀ դրամ) |
| 67 | Գործավար-օպերատոր | 1 | 160.0 | 160,0 | - | 160,0 |

բ) Նույն բաժնի՝ «Ընդամենը՝ տեխնիկական սպասարկման անձնակազմ» տողի 3-րդ սյունակում նշված «20» թիվը փոխարինել «21» թվով, 7-րդ սյունակում նշված <<3440,0>> թիվը փոխարինել <<3600,0>>, իսկ 6-րդ սյունակում նշված «2647500» թիվը փոխարինել «26376,6» թվով:

գ) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 3-րդ սյունակում նշված <<114>> թիվը փոխարինել <<115>> թվով, իսկ 7-րդ սյունակում նշված «26216,6» թիվը փոխարինել «26376,6» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**<u>Օրակարգ-15</u>**

**15) Համայնքների սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում համայնքի կարիքների համար ձեռքբերված FAW, The First Automobile Work, FAW CA1161PK2L4E5A80 մակնիշի աղբատար մեքենան համայնքի սեփականության գույքի ցանկում ընդգրկելու մասին:**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/**

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անի համայնքի կարիքների համար 2024 թվականի հոկտեմբերի 11-ի ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/15 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրով 2025 թվականին ձեռք բերված FAW, The First Automobile Work, FAW CA1161PK2L4E5A80 մակնիշի աղբատար մեքենան լիազոր մարմնում գրանցելու, պետական համարանիշ ստանալու և տեխնիկան շահագործելու համար այն անհրաժեշտ է ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում և հաշվառել, որպես համայնքի սեփականության գույք:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության՝ կողմ 11, դեմ՝ 0, ձեռնպահ 0 արդյունքներով որոշումն ընդունվեց:

Ավագանու անդամ Մերի Ենոքյանը քվեարկությանը չի մասնակցել:

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ FAW, THE FIRST AUTOMOBILE WORK, FAW CA1161PK2L4E5A80 ՄԱԿՆԻՇԻ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով,

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անի համայնքի կարիքների համար 2024 թվականի հոկտեմբերի 11-ի ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/15 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրով 2025 թվականին ձեռք բերված FAW, The First Automobile Work, FAW CA1161PK2L4E5A80 մակնիշի աղբատար մեքենան ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Զեկուցողը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Արձանագրեց՝**
**Անիի համայնքապետարանի աշխատակազմի**
**քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար** **Հարություն Համբարյան**

<<14>> փետրվարի 2025 թ.
քաղաք Մարալիկ